Մաքսիմ Բարիսի Գրիգորյանի թիվ ՍՆԴ/2375/04/24 սնանկության գործով կրկնաճուրդի կազմակերպման և անցկացման մասին

Մաքսիմ Բարիսի Գրիգորյանի թիվ ՍՆԴ/2375/04/24 սնանկության գործով Մաքսիմ Բարիսի Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող գույքի 06.05.2026թ. ժամը 12:00-ին հայտարարված կրկնաճուրդը չի կայացել հայտ չլինելու պատճառով:

27.05.2026թ. ժամը 12:00-ին Մաքսիմ Բարիսի Գրիգորյանի թիվ ՍՆԴ/2375/04/24 սնանկության գործով կառավարիչ Վարդևան Պետրոսյանի կողմից ՀՀ ք. Երևան, Կոմիտասի 59/9շ., 3-րդ հարկ 4-րդ սենյակ հասցեում կանցկացվի Մաքսիմ Բարիսի Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող գույքերի՝ («Արդշինբանկ» ՓԲԸ-ում գրավադրված ոսկյա իրեր) բաց դասական (գնի ավելացման) եղանակով կրկնաճուրդ՝ նախորդ՝ չկայացած աճուրդի գնից 2% նվազեցված արժեքով:
Լոտերի աճուրդները կազմակերպվում են շարադրված հերթականությամբ:
Աճուրդի է ներկայացվում հետևյալ գույքերը՝
ԼՈՏ 2 Ոսկյա շղթա, քանակը՝ 2 հատ, հարգը՝ 580, իրի ընդհանուր կշիռը՝ 31,6գ, իրում պարունակվող ոսկու կշիռը՝ 28,4գ.: Գտնվելու վայրը՝ «Արդշինբանկ» ԲԲԸ-Ի «Արաբկիր» մասնաճյուղ, ՀՀ, ք.Երևան, Կոմիտասի 41
Լոտ 2-ի մեկնարկային գինն է 828,132 ՀՀ դրամ:

ԼՈՏ 3 Ոսկյա մատանի, քանակը՝ 4 հատ, հարգը՝ 500, իրի ընդհանուր կշիռը՝ 18,2գ, իրում պարունակվող ոսկու կշիռը՝ 15գ.: Գտնվելու վայրը՝ «Արդշինբանկ» ԲԲԸ-Ի «Արաբկիր» մասնաճյուղ, ՀՀ, ք.Երևան, Կոմիտասի 41
Լոտ 3-ի մեկնարկային գինն է 374,909 ՀՀ դրամ:

ԼՈՏ 4 Ոսկյա թևնոց, քանակը՝ 1 հատ, հարգը՝ 580, իրի ընդհանուր կշիռը՝ 7,8գ, իրում պարունակվող ոսկու կշիռը՝ 7,4գ.: Գտնվելու վայրը՝ «Արդշինբանկ» ԲԲԸ-Ի «Արաբկիր» մասնաճյուղ, ՀՀ, ք.Երևան, Կոմիտասի 41
Լոտ 4-ի մեկնարկային գինն է 215,781 ՀՀ դրամ:

ԼՈՏ 5 Ոսկյա խաչ, քանակը՝ 1 հատ, հարգը՝ 580, իրի ընդհանուր կշիռը՝ 5,3գ, իրում պարունակվող ոսկու կշիռը՝ 5,0գ.: Գտնվելու վայրը՝ «Արդշինբանկ» ԲԲԸ-Ի «Արաբկիր» մասնաճյուղ, ՀՀ, ք.Երևան, Կոմիտասի 41
Լոտ 5-ի մեկնարկային գինն է 145,798 ՀՀ դրամ:

ԼՈՏ 6 Ոսկյա օղ, քանակը՝ 2 հատ, հարգը՝ 500, իրի ընդհանուր կշիռը՝ 6,3գ, իրում պարունակվող ոսկու կշիռը՝ 5,7գ.: Գտնվելու վայրը՝ «Արդշինբանկ» ԲԲԸ-Ի «Արաբկիր» մասնաճյուղ, ՀՀ, ք.Երևան, Կոմիտասի 41
Լոտ 6-ի մեկնարկային գինն է 142,465 ՀՀ դրամ:

ԼՈՏ 7 Ոսկյա օղ, քանակը՝ 2 հատ, հարգը՝ 580, իրի ընդհանուր կշիռը՝ 2,5գ, իրում պարունակվող ոսկու կշիռը՝ 2,2գ.: Գտնվելու վայրը՝ «Արդշինբանկ» ԲԲԸ-Ի «Արաբկիր» մասնաճյուղ, ՀՀ, ք.Երևան, Կոմիտասի 41
Լոտ 7-ի մեկնարկային գինն է 64,151 ՀՀ դրամ:

Աճուրդն անցկացվում է ՀՀ արդարադատության նախարարի 16.03.2020թ. թիվ 116-Ն «Պարտապանին պատկանող գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու կարգը

հաստատելու մասին» հրամանով սահմանված կարգով (հրամանը կցված է): Նշված ենթաօրենսդրական ակտը՝ հրամանը, հանդիսանում է նաև աճուրդի անցկացման կանոնակարգը:
Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև 21.05.2026թ. ժամը 18:00 ներառյալ կարող են աճուրդի մասնակցության հայտ (այսուհետ՝ հայտ) ներկայացնել ՀՀ Սնանկության դատարան՝ ՀՀ ք.Երևան, Օտյան 53/2 հասցեով, հայտը գրասենյակի միջոցով կառավարչին փոխանցելու (տրամադրելու) համար: Աճուրդի վերաբերյալ ծանուցումներն իրականացվելու են հայտում ներկայացված էլեկտրոնային փոստի հասցեի միջոցով:
Հայտատուն հայտում նշում է կատարում նաև այն մասին, որ տեղեկացված է, որ ծանուցումները և փաստաթղթերը ուղարկվելու են հայտում նշված էլեկտրոնային փոստի հասցեին և, որ դա համարվում է պատշաճ ծանուցում (հանձնում):Հայտատուն կրում է իր կողմից տրամադրված էլեկտրոնային հաղորդակցության միջոցներին ուղարկված ծանուցումները չկարդալու անբարենպաստ հետևանքները:
Հայտին կից պետք է ներկայացվեն.
1) լոտի մեկնարկային գնի 5 տոկոսի չափով նախավճարի վճարումը աճուրդի մասին հայտարարությունում նշված սնանկության հատուկ հաշվին կատարված լինելու փաստը հաստատող անդորրագիրը.
2) լոտի մեկնարկային գնի 1 տոկոսի, բայց ոչ ավել, քան նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով աճուրդի մասնակցության վճարի վճարումը աճուրդի մասին հայտարարությունում նշված սնանկության հատուկ հաշվին կատարված լինելու փաստը հաստատող անդորրագիրը.
3) լիազորագիր, եթե հայտատուն հանդես է գալիս լիազորված անձի միջոցով.
4) իրավաբանական անձ հայտատուների դեպքում՝ նաև պետական գրանցումը հավաստող փաստաթղթի և կանոնադրության, ինչպես նաև իրավաբանական անձի ներկայացուցչի անձը հաստատող փաստաթղթի պատճենները.
5) անհատ ձեռնարկատեր հայտատուների դեպքում՝ նաև պետական հաշվառումը հավաստող փաստաթղթի և անձը հաստատող փաստաթղթի պատճենները.
6) անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ հայտատուների դեպքում՝ նաև անձը հաստատող փաստաթղթի պատճենը:
Աճուրդի մասնակցության վճարը և նախավճարը պետք է վճարվեն մինչև աճուրդի հայտ ներկայացնելը Մաքսիմ Բարիսի Գրիգորյանի անվամբ «Այ Դի Բանկ» ՓԲԸ-ում բացված թիվ **11807063414200** սնանկության հատուկ հաշվին՝ որպես ստացող նշելով պարտապանին:
Աճուրդի մասնակից չհամարվող անձը աճուրդին ներկա գտնվելու համար կառավարչին է ներկայացնում իր անձը հաստատող փաստաթուղթը, իսկ Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչը՝ աճուրդին ներկա գտնվելու վերաբերյալ հանձնարարականի բնօրինակը և անձը հաստատող փաստաթուղթը: Կառավարիչն իրավասու է սույն կետում նշված փաստաթղթերը չներկայացրած անձին չթույլատրել ներկա գտնվել աճուրդին: Աճուրդին մասնակցելու համար ցանկացողների՝ հայտատուների, կողմից ներկայացված հայտի ձևը և բովանդակությունը պետք է համապատասխանեն ՀՀ արդարադատության նախարարի 16.03.2020թ.-ի «Պարտապանին պատկանող գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու կարգը սահմանելու մասին» N 116-Ն հրամանին՝ ներառյալ ՀՀ արդարադատության նախարարի 16 հունիսի 2025թ. թիվ 374-Ն հրամանով ՀՀ արդարադատության նախարարի 16.03.2020թ.-ի հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին հրամանով սահմանված կարգին:
Եթե հայտ ներկայացրած անձը աճուրդին չի մասնակցում կամ մասնակցում է, սակայն հաղթող չի ճանաչվում, ապա նրա կողմից վճարված նախավճարը ենթակա է վերադարձման, իսկ աճուրդի մասնակցության վճարը վերադարձման ենթակա չէ:
Աճուրդում հաղթող մասնակից է համարվում աճուրդում ամենաբարձր գին առաջարկած մասնակիցը: Աճուրդի հաղթողի կողմից արձանագրությունն ստորագրելուց հրաժարվելու կամ արձանագրությունը ցանկացած այլ պատճառով չստորագրվելու դեպքում, այդ մասնակիցը զրկվում

է այդ աճուրդին մասնակցելու իրավունքից, իսկ եթե տվյալ աճուրդին մասնակցում է մեկից ավելի հայտատու, ապա աճուրդը շարունակվում է գնային առաջարկների ներկայացման փուլից նույն մեկնարկային գնով՝ առանց արձանագրությունը չստորագրած անձի /հայտատուի/ մասնակցության: Արձանագրությունը ստորագրելուց հրաժարվելու կամ արձանագրությունը ցանկացած այլ պատճառով չստորագրվելու դեպքում, մասնակցի վճարած մասնակցության վճարն ու նախավճարը հետ չեն վերադարձվում:
Աճուրդում հաղթած և աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը ստորագրած անձը պարտավոր է վճարել լոտի վաճառքի գինը արձանագրությունը ստորագրելուց հետո՝ տասն օրվա ընթացքում՝ նվազեցնելով վճարված նախավճարի չափը: Նշված ժամկետում վաճառքի գինն ամբողջությամբ չվճարելու դեպքում աճուրդը համարվում է չկայացած, իսկ աճուրդի հաղթողի կողմից վճարված /փոխանցած/ նախավճարը և մասնակցության վճարը չեն վերադարձվում: Վաճառքի գինն ամբողջությամբ վճարվելուց /փոխանցելուց/, այն փաստացի սնանկության հատուկ հաշվին մուտքագրվելուց և սահմանված վճարումների /փոխանցումների/ կատարումը հավաստող փաստաթղթերը կառավարչին ներկայացնելուց հետո՝ գույքի նկատմամբ արգելանքների և սահմանափակումների վերացման գործընթացի ավարտից հետո, հինգ աշխատանքային օրվա ընթացքում կնքվում է լոտի առուվաճառքի պայմանագիրը: Գույքի առուվաճառքի պայմանագրի կնքման, դրանից ծագող իրավունքների պետական գրանցման, գույքը գնորդին փոխանցելու, շարժական գույքի տեղափոխման ծախսերը և պայմանագրից բխող բոլոր անհրաժեշտ այլ (ցանկացած տեսակի) ծախսերը և գործողությունները կատարվում են աճուրդի հաղթող ճանաչված մասնակցի կողմից: Աճուրդով վաճառված անշարժ գույքերը երրորդ անձանց կողմից կամավոր ազատման խոչընդոտ առաջանալու դեպքում, այդ անձանց նկատմամբ իրավաբանական նշանակության իրավաչափ գործողությունների նախաձեռնումը և իրականացումը կատարվում է աճուրդում հաղթող ճանաչված անձի կողմից՝ իր ուժերով և միջոցներով:
Լոտը կարելի է ուսումնասիրել սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև 21.05.2026թ. ներառյալ, աշխատանքային օրերին և ժամերին՝ դրա գտնվելու վայրում, նախապես պայմանավորվելով Մաքսիմ Բարիսի Գրիգորյանի սնանկության գործով կառավարիչ Վարդևան Պետրոսյանի հետ: Կառավարչի հետ պայմանավորվելու, լոտերի մասին տեղեկություններ ստանալու և աճուրդին առնչվող ցանկացած այլ հարցով կարող եք զանգահարել 095 590-777 հեռախոսահամարով: